



**DIOCÈSE DE FRANCE
DE L'ÉGLISE APOSTOLIQUE ARMÉNIENNE**
Son Excellence Monseigneur Vahan Hovhannessian, Primat de France

Է – ԹԵՐԹԻԿ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Nº. 3, Tome 2, le 12 février 2015

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻ ՊԱՏԱՐԱԳԸ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԷՋ

Ֆրանսայի Թեմակալ Առաջնորդ Ս. Վահան Եպիսկոպոս Յովհաննէսեան Կիրակի 24 Յունուար 2015-ին այցելեց Ալֆորվիլ, հանդիպելու համար իր հօտին եւ պատարագելու: Հոգեւոր Հովիւ Ս. Տիրայր Քահանայ Գրիգճեան, Ծխական Խորհուրդի անդամներ եւ հաւատացեալներ շերտօրէն դիմաւորեցին Սրբազանը: Իր քարոզին մէջ Սրբազանը անորադարձաւ օրուան սուրբգրական ընթերցումին, շեշտը դրաւ եկեղեցւոյ կարեւոր դերին եւ ժողովուրդի հաւատքին վրայ: Ան շնորհակալութիւն յայտնեց եւ քաջալերեց հոգեւոր հովիւն ու վարչական գործով զբաղող բոլոր նուիրեալները: Ան ողջունեց քաղաքապետն ու անոր գործակիցները, որոնք ներկայ էին պատարագին, եւ շնորհակալութիւն յայտնեց անոնց զօրակցութեան համար շրջանի մեր ժողովուրդին: Պատարագէն ետք հիւրասիրութիւն մը կազմակերպուած էր եկեղեցւոյ կից սրահին մէջ, ուր ժողովուրդը առիթ ունեցաւ մօտէն շփուելու Սրբազան Հօր հետ եւ անոր օրհնութիւնը ստանալու: Ապա ճաշի սեղանի շուրջ Սրբազանը առիթ ունեցաւ տեղեկութիւններ ստանալու շրջանի մեր համայնքը յուզող հարցերու մասին:



ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐՈՒ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՌԱՔԼՈՒՐ

28 Յունուարին, Բանակի Օրուան առթիւ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, միանալով Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանի եւ Արցախի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեանի, այցելեցին Եռաբլուր, իրենց յարգանքի տուրքը մատուցելու համար անկախութեան եւ արցախեան շարժումի նահատակներուն եւ աղօթեցին անոնց հոգիներու խաղաղութեան եւ մեր երկրի ու բանակի անասանութեան համար: Յաւելեալ տեղեկութիւններու համար [սխմել այստեղ](#):




ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՅԻ ՄԷՋ

Ուրբաթ 23 Յունուարին Վահան Սրբազան այցելեց *Իսի Լէ Մուլինոյի* Ս. Մարիամ Աստուածին եկեղեցի : «Հրաշափառ»ով մուտք գործելով եկեղեցի եւ գոհաբանական կարճ արարողութենէ ետք, Առաջնորդ Սրբազանը իր շնորհակալութիւնները յայտնեց հոգեւոր հովիւին Ս. Աւետիս Աւագ Քահանայ Պալըգեանին, Ծխական Խորհուրդի ատենապետ Հայկազ Կեօրտեպաք-Տրդատեանին եւ եկեղեցւոյ ծառայութեան յծուած բոլոր նուիրեալներուն: Ապա Սրբազանը նախագահեց եկեղեցւոյ սրահին մէջ կազմակերպուած ճաշկերոյթին, ի պատիւ եկեղեցւոյ ծառայողներուն: Գեղարուեստական յայտագիր մը նախատեսուած էր եկեղեցւոյ երգչախումբին կողմէ, ղեկավարութեամբ Ստեփան Եորդանճեանի: Խօսք առին հոգեւոր հովիւը, Ծխական Խորհուրդի ատենապետը, Ալֆորվիլի փոխ քաղաքապետ Յարութիւն Խանճեան եւ հիւրաբար ներկայ գտնուող Յարութ Սասունեան: Ապա Ծխական Խորհուրդին կողմէ յիշատակի նուէր մը յանձնուեցաւ Սրբազան Հօր, որ իր եզրափակիչ խօսքին մէջ բարձր գնահատեց կատարուող աշխատանքները եւ իր զօրակցութիւնը յայտնեց բոլորին:



ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՄԵԿՆԻ Ս. ԷԶՄԻԱՍԻՆ


Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւերով Վահան Սրբազան Ս. Էջմիածին կը մեկնի 21-27 Փետրուարին, մասնակցելու համար Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի ժողովներուն, որպէս անդամ: Ժողովի օրակարգի գլխաւոր կէտերն են Հայոց Ցեղասպանութեան նահատակներու սրբադասումը եւ հարիւրամեակի ձեռնարկները: Սրբազան Հայրը Մարտին դարձեալ Ս. Էջմիածնի մէջ պիտի մասնակցի կանոնադրութեան յանձնախումբի ժողովներուն, ուր պիտի քննարկուին զանազան թեմերու կանոնադրութիւններու ներդաշնակեցման աշխատանքները: Վերոյիշեալ ժողովներու մասին յաւելեալ տեղեկութիւններու համար [սխմել այստեղ](#):



ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔԸ ՄԱՐՍԷՅԻ ՄԷՋ

Աւելի քան երկու տարի է որ Մարսելի Սրբոց Թարգմանչաց Մայր եկեղեցւոյ կից մշակութային կեդրոնի սրահին մէջ կը գործէ «Ս. Թարգմանչաց» լսարանը: Այս ծրագիրը հետաքրքրական զրոյցներու շղթայ մըն է, զոր կ'իրականացնէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Ս. Արամ Քահանայ Ղազարեանը, ամէն Հինգշաբթի ժամը 19-ին: Անկաշկանդ հարցում-պատասխանի, մտերմիկ քննարկումներու եւ կարծիքներու փոխանակման միջոցով ներկաները կը ծանօթանան Ս. Գրքին, Հայ Առաքելական Եկեղեցւոյ դաւանանքին եւ աւանդութիւններուն, ինչպէս նաեւ զիրենք յուզող զանազան հարցերու վերաբերեալ կը ստանան պատասխաններ, ինչպէս օրինակ Ս. Գիրքը ի՞նչ կուսուցանէ յղութեան արհեստական ընդհատման, ամուսնալուծման, եկեղեցւոյ մէջ կնոջ ունեցած դերի, երազահանութեան, անձնասպանութեան կամ

[Մխմել այստեղ](#)



ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ...

- **ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁԻ ՇԷՆՔԻ ԲԱՅՈՒՄ:** Շաբաթ 25 Յունուարին Վահան Սրբազան ներկայ եղաւ Դպրոցասէր Տիկնանց Վարժարանի նոր մանկապարտէզի բացման արարողութեան եւ շրջանի քաղաքապետին հետ միասին կտրեց ծապաւէնը: Պաշտօնական խօսքերէն ետք իրագործուեցաւ գեղարուեստական յայտագիր:
- **CCAF-Ի ԸՆԹՐԻՔԸ:** Չորեքշաբթի 28 Յունուարին Սրբազան Հայրը ներկայ եղաւ Ֆրանսայի Հայկական Կազմակերպութիւններու Համակարգող Մարմնի (CCAF) կազմակերպած տարեկան ընթրիքին: Ներկայ էին հանրապետութեան նախագահ Ֆրանսուա Օլանտ, Շարլ Ագնաւուր, պետական եւ քաղաքական բարձրաստիճան անձնավորութիւններ: